

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2014 թ. հունվարի 17-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» եռամյա ծրագրի շրջանակում, ծրագրի խորհրդատվական հանձնաժողովի վերջին նիստին,
- ✓ 2014 թ. հունվարի 30-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յ. Պողոսյանը, ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը և նույն բաժնի առաջատար մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «ԵՀՔՄ- ՇՄԱՄՀ/ Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգ/ առաջնային տվյալների հոսքերի ապահովում» խորագրով ազգային աշխատաժողովին,
- ✓ 2014 թ. փետրվարի 20-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Միգրացիայի վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության կատարելագործում» խորագրով ՄԻՌՊԱԼ ցանցի վիդեոկոնֆերանսին,
- ✓ 2014թ. փետրվարի 26-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ջ. Ավոյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի աշխատանքային միգրացիայի շրջափուլի բարելավում» խորագրով կլոր սեղան-քննարկմանը,
- ✓ 2014թ. փետրվարի 27-28-ը թվով 65 մասնակից մասնակցել են Աղվերանում կայացած «ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման դաշտային աշխատանքների փուլում բացահայտված խնդիրներ» խորագրով սեմինար-խորհրդակցությանը: